

ՏԱՃԱՏ ԹԵՐԼԵՄԵՉՅԱՆՆ ԻՄ ՀՈՒՇԵՐՈՒՄ

«Դավոյի դեպքի» ու Տաճատ Թերլեմեզյանի կատարած վրիժառույթյան մասին լսել եմ մեր մեծերից, կապված Վանի 1915թ. Ապրիլյան հերոսամարտի հետ, որը չնայած հրազենով բազմակի ուժեղ թուրքական կանոնավոր զորքի ու նրան ուղեկցող խաժամուժի, թալանչի «չեթների», ավարտվեց փայլուն հաղթանակով: Որքան ավելի դյուրին ու պակաս զոհերով կշահեինք հաղթանակը, ասում էին կռիվներին մասնակցած վանեցիները, եթե Դիերցի Դավոն 1907-ին չմատներ մեր զինապահեստների տեղերը: Տարիների ընթացքում մեծ դժվարությամբ ձեռք բերված զենքերն ու փամփուշտները չընկնեին թուրքերի ձեռքը: Լավ էլավ, որ էտ մատնիչին գնդակահարեց հերոս վրիժառու Տաճատ Թերլեմեզյանը... Վանեցիների ճակատագրում տեղի ունեցած այդ հերոսամարտը, որն իր արժանավոր գնահատականն է ստացել արևմտահայության ազգագրական պայքարի պատմության մեջ, իր խոր հետքն է թողել վան-վասպուրականցիների հիշողության մեջ ու հետագա ճակատագրում: Ահա թե ինչ է գրել Տաճատի մասին նրա ազգական, հայկական Այգեստանի պաշտպան, համբավավոր նշանառու, բազմատաղանդ գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանը. «Անցեալ տարուայ կռիվները կապացուցեն, որ նախնի քաջորդիների սերունդը չէ սպառուած: 1915թ. գարնան ուրախ օրերին վանեցիք երգելով կկռվեին թուրք բանակին դեմ, բացարձակօրէն անհաւասար ուժերով: Կը կռվեին եղանգներով, ատրճանակներով, որսի հրացաններով և կդիմադրեին Կրուպի թնդանօթներին...»:

Վեց տարիս տակավին չէր լրացել, երբ այդ իրադարձությունների ականատեսն եղա: Ապրում էինք Վանի այգեստանների «Չաղլի փողան» փողոցում գտնվող մեր տանը, հետևում՝ անուշահամ մրգատու ծառերով լեցուն ընդարձակ այգով: Կռվի օրերին երեխաներիս խստորեն պատվիրել էին դուրս չգալ ոչ փողոց, ոչ էլ այգի, քանզի առավոտից մինչև երեկո չէին դադարում գնդակների վժժոցները, թնդանօթների որոտները: Անհնարին էր բանտարկված մնալ վանդակում, երբ մեր դրախտանման այգում բացվել էր գարունը: Ծառերը ծաղկել էին, բուրմունքը հասնում էր մինչև մեր տուն: Ահա թե ինչու մի օր խիզախեցի մեծերից թաքուն ծլկել, հորթանոցի դռնով դուրս գալ այգի ու բարձրանալ ծաղկած մի ծառի: Հմայված գեղեցիկ ու բուրումնավետ շրջապատով, անուշադիր էի օդում ճախրող գնդակների վզզոցներին: Ուշքի եկա, երբ լսեցի մորս աղեկտուր կանչը: Տղա Վարա՛զդատ, տղա կապարուկ, քեզ չասի՞ն տնից դուրս չելնես, անմիջապես տուն եկուր... Ծաղկեփունջը ձեռքիս, ուրախ-ուրախ տուն վերադարձա: Այն տարիքում չէի գիտակցում իրադրության ողջ լրջությունը: Սկսեցի հասկանալ, երբ բռնեցինք գաղթի ճանապարհը: Վանեցիները չվայելեցին իրենց փառապանծ հաղթանակի ուրախությունը: Առաջացած իրադրության կապակցությամբ, նահանջող ռուսական զորքի հետ, մերթընդմերթ ենթարկվելով թուրքերի ու քրդերի հարձակումներին, ուղղություն վերցրինք դեպի նոր ափեր... Տանջալից ու կորուստներով հասանք Իգդիր, ուր մի քանի օր հանգստացանք, կերակրվեցինք: Փոխադրվելով Վաղարշապատ, ականատես եղանք Էջմիածնի վանքի բակում, լճի ափերին ու անտառակում հանգրվանած բազմահազար գաղթականների անլուր տառապալից վիճակին: Մոլեգնում էին խուլերան ու տիֆը. մահվան գերանդին դաժանորեն իր հունձն էր կատարում, հարյուրավոր մահացածների դիակներ դուրս էին բերվում ու թաղվում Գայանե տաճարի բակում, դաշտավայրում: Նույն տարին տիֆին զոհ գնացին Գուրգեն եղբայրս ու հայրս, հետագա տարիներին այլ հիվանդություններից վախճանվեցին մեծ եղբայրս՝ Աղասին ու երկու քույրերս: 1920-ին, ինը հոգուց բաղկացած մեր ընտանիքից ողջ մնացին մայրս, Արծրուն եղբայրս ու ես:

Որտեղ էլ որ հանգրվանեցին վանեցիները, նրանց սրտերում տասնամյակներ շարունակ միաց հայրենիքի կորուստը, հայրենաբաղձությունն ու դա փոխանցվեց իրենց ժառանգներին:

- Հայրենիքից քաղցր պան չկա՛: Ինչդ մոռնանք մեր սիրուն Վանը, Այգեստանը, քաղաքամեջը, Խաչ-փոխանը, Արարուց մեյդանը: Ահա մեր չքնադագեղ Վանա ծովը, անուշահամ տառեխ ձուկը, Աղթամարա ու Վարազա վանքերը, Շաղբաղի կարմիր գինին... Ինչպես մոռանային «վերևում դրախտ, ներքևում Վան» հորջորջվող իրենց ծննդավայրը, որի կորուստը ողբացին բազմում քերթվածներով: Ահա դրանցից մեկը, որի հեղինակն է վանեցի նշանավոր դերասան ու գրող-բանաստեղծ Մանուել Մարությանը.

*«Երկիր իմ չքնաղ, Վան-Վասպուրական,
Չավակների արի եղան ցիրուցան,
վանքերդ աւեր, գիւղերդ հրկիզած,
Դաշտերդ խոպան՝ անջրդի, լքած:
Տխուր են լեռներդ՝ Վարազն ու Սիփան,
Արտոսն ու Գոգուռ, որպես լուռ վկան,
Գործուած ահաւոր ոճրին ու դաւին,
Որ մեզ պատճառեց անարգ թշնամին...»*

Ու եդպես, ինչպես վանեցիներն էին ասում. մեր անմահական ծննդավայր Վանը, մուլնքն ու այգին մնաց շան բերան... Թուրքերի ձեռքագատած եղեռնից հետո, ողջ մնացածների մի մասը հանգրվանեց Արևելյան Հայաստանում: Շատերը ցրվեցին աշխարհի տարբեր երկրներ, հավելեցին եղած համայնքները կամ ստեղծեցին նորերը, որոնք միասին այժմ կոչվում են Սփյուռք:(Վանը, գաղթը՝ հետագա իմ ճակատագիրը նկարագրել եմ իմ «Կյանքիս քառուղիներում» գրքի 4-14 էջերում, Եր՛ան, 1999թ.): Որտեղ էլ որ գտնվեցին եղեռնապուրծ հայերը, իրենց սրտերում շարունակեց միալ հայրենակարոտությունը, առաջացնելով տարբեր միջոցառումներ, նաև հայրենիքի հիշատակների պահպանման: Վրիժառու Տաճատ Թերլեմեզյանի շանքերով, Նյու-Յորքից ոչ հեռու Նյու-Ջերսի նահանգի Ուոլդվիկ ավանում կառուցապատված մի փողոց կոչվեց «Վան» անունով (Van street): Ամենուրեք կառուցվեցին եկեղեցիներ, դպրոցներ, ակումբներ, որոնք ծառայում են հայապահպանության սրբազան գործին: Բուն Մայր Հայրենիքում տիրող կաշկանդ պայմանները, երբ հայրենակարոտությունն ու հայրենաբաղձությունը որակվում էին որպես ազգայնամոլություն (սացիոնալիզմ), զգացմունքները պոռթկացին 1965-ին, երբ թույլատրվեց նշել հայոց ցեղասպանության 50-ամյակը: Վերջապես հայ ժողովրդի մեծ ողբերգությունն իր ճարտարապետական մարմնավորումն ստացավ Ծիծեռնակաբերդի բարձունքին կանգնեցված հոյակապ հուշահամալիրով: Դրան հաջորդեցին Մուսա Լեռան, Հաճնի, Խարբերդի, Ապարանի, Այնթապի ու այլ հուշակոթողները, դառնալով հայրենի օջախների խորհրդանիշներ: Որոշ ուշացումով հայրենի հողի վրա հուշակոթող կանգնեցնելու գաղափարը ոգեշնչեց նաև վան-վասպուրականցիներին, ըստ որում՝ նախաձեռնողը եղավ հեռավոր ափերում ապրող, բայց հայրենակարոտ, խիզախ վրիժառու Տաճատ Թերլեմեզյանը: Ինքը Ամերիկայում, Կարպիս Ջրբաշյանը Ֆրանսիայում ձեռնարկեցին Հայաստանում Վանի հերոսամարտի հուշակոթող կառուցելու համար դրամական նվիրատվությունների կուտակումը: Երբ հաջողվել էր կուտակել զգալի մի գումար (կարծեմ 35 հազար դոլարի չափով), կազմակերպիչները այն տրամադրեցին Հայաստանի կառավարությանը, խնդրելով թույլատրել կառուցելու Վանի հերոսամարտի հիշատակը հավերժացնող հուշակոթող:

Հայաստանի կառավարությունը ընդառաջելով ստացած դիմումը, համապատասխան կարգադրություններով ապահովեց դրա իրագործումը: Մասնակից դարձա նաև ես, Հայաստանի ճարտարապետների միության վարչության այն տարիների նախագահս: Ընդառաջելով Տաճատ Թերլեմեզյանի ցանկությանը, նախագծման համար մրցույթ հայտարարեցի, վանեցու ժառանգ երեք ճարտարապետների՝ Մարտին Միքայելյանի, Ֆենիքս Ղարբինյանի ու Ջիմ Թորոսյանի միջև, վերջնական ընտրության իրավունքը վերապահելով ինձ ու Ռաֆայել Իսրայելյանին: Սահմանված ժամկետում տղաները ներկայացրին նախագծի երեք տարբերակներ: Դիտումս ու քննարկումը կատարվեց մեր տանը: Հավանության արժանացավ Ջիմ Թորոսյանի նախագիծը: Մնում էր զբաղվել կառուցման տեղի ընտրությամբ: Այդ նպատակով սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանի մոտ իմ, Ռաֆայել Իսրայելյանի ու Ջիմ Թորոսյանի մասնակցությամբ տեղի ունեցավ խորհրդակցություն: Ընդհանուր կարծիքն այն էր, որ հուշակոթողը կառուցվի դեպի Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը տանող ճանապարհի որևիցե հարմար տեղում: Այդ նպատակով միասին Երևանից մեկնեցինք: Էջմիածին-Հոկտեմբերյան մայրուղու մի հատվածում կանգ առանք: Ձախ կողմում մի փոքր բարձրունք տեսանք, որի վրա կարող էր տեղադրվել կոթողը: Բաց դաշտում, մի կողմից Արարատ, մյուս կողմից՝ Արագած լեռների համայնապատկերում հուշակոթողն իրոք կարող էր հնչել լինել: Հավանություն տալով տեղին վերադարձանք Երևան: Հարմար գտա «Հայրենիքի ձայն» թերթում հանդես գալ հուշակոթողի նախագծի գնահատմամբ: Նրանում նշված է. «Հայ ժողովրդի ազատատենչ զավակների մղած հերոսամարտերում նվիրված թագմաթիվ հուշարձաններ կանգնեցված են Հայրենի հողի վրա: Հայրենասիրական ազնիվ մղումներով կատարած մի նոր նախագիծ ևս սպասում է իրագործման: Խոսքը Վասպուրականցիների 1915թ. գարնանը մղած հերոսամարտի մասին է, թե ինչպես Վանը պաշտպանողները քաղաքամիջի, Այգեստանների և շրջակա գյուղերի մեջ կենաց-մահու անավոր կռիվ մղեցին թուրք բռնակալների դեմ, Եղեռնից փրկվելու ՔոչյատևելուՄՆ համար: Այդ հերոսամարտի մասին լսել էր ճարտարապետ Ջիմ Թորոսյանը, իր հորից և հարազատներից: Նա հանձն առավ Վանի հերոսամարտը հավերժացնող մի նախագծի մշակումը: Կոթողը մտահղացված է պարզ հորինվածքով: Ներկայացնում է Վանի բերդի անառիկ պարիսպները: Պատը երկտակ է, երկու մետր արանքով, հիմքը ունի 25 մետր լայնք: Դեպի վեր նեղացող 30 մետր բարձրությամբ պատը պսակված է գեղեցիկ ատամնաշարով: Կենտրոնում տեղակայված բացվածքի մեջ հաղթանակորեն թառած է Վասպուրականի Արծիվը, ժողովրդի արիության խորհրդանիշը: Գլխավոր ճակատի վրա, ձախակողմյան մասում գետնոված դուռը տանում է դեպի հերոսների խորհրդանշական տապանատունը: Աջակողմյան ընդարձակ հարթույթը պիտի ծածկվի հերոսամարտին վերաբերվող վիմագրություններով: Երկու պատերի միջև պետք է լինի քարե սանդուղքներ, որոնք պիտի տանեն դեպի տարբեր բարձրությամբ կամարակապ հարթակներ, որտեղից երևում են Արարատյան դաշտի հմայիչ բնապատկերները: Հուշարձանը նախատեսվում է կանգնեցնել Էջմիածին-Հոկտեմբերյան մայրուղու եզրին, Սարդարապատի հուշարձանախմբին տանող ճանապարհի վրա: Կոթողը պետք է խոյանա Արարատյան դաշտի մի հատվածի մեջ և ոչ մի բան չպետք է խանգարի նրա լիարժեք ընկալմանը: Կոթողի հետևի մասում պիտի աստիճաններով շրջապատված քառակուսի ստեղծվի, կենտրոնը՝ ավազան: Այս ամենը պետք է կառուցվի Հոկտեմբերյանի կարմիր տուֆով»: Այս հողվածի առիթով, հարկ համարեցի հիշատակել հուշակոթողի առաջին տարբերակի նախագիծը, առանց թվականների նշումով, քանզի չեմ հիշում: Իմ կարծիքով դա կատարվել է 1960-ական թվականների վերջին, 1970-ական թվականների սկզբին, երբ ես տակավին, որպես նախագահ գլխավորում էի

Հայաստանի ճարտարապետների միությունը (մինչև 1974-ը): Արխիվումս պահպանվել են Տաճատ Թերլեմեզյանից ստացած մի քանի նամակներ, որոնցում հետաքրքրվում էր հուշակոթողի կառուցման ընթացքով, ինչպես էր այն արագացնել, որովհետև ուզում էր իր ջանքերի արդյունքը տեսնել մինչև... Իր փափագին հետամուտ, Տաճատ Թերլեմեզյանը չէր բավարարվում միայն նամակներ գրելով: Երբ 1979-ին Երևան էր ժամանել, Ռոմիկ Յովնանյանի հետ ինձ այցելեց մեր տանը: Զրույցի ժամանակ իմանալով, որ կիսա նույնպես վանեցի է, այն էլ

Իշխանի թիկնապահ «Զոթոթ» մականվամբ Պողոս Մարտիրոսյանի քրոջ դուստրը, մանրամասներ պատմեց Իշխանի և իր ուղեկիցների եղեռնական մահվան մասին: Վն Էտա արյունախում Ջևդեդի գործն էր... Միասին մեկնեցինք Էջմիածին հանդիպելու Վազգեն Ա-ին: Ճանապարհին սկսեցի երգել: Տաճատն ուշադրությամբ ունկնդրելով, առանձնապես հավանեց «Դլե յամանի» իմ կատարումը. վն Էտա երբ, վն բացականչեց, վն տյու կասես, ինչպես լսել եմ Վանում: Երբ ես այլևս «դիրքում» չէի անտեղյակ դարձա հետագա գործընթացին: Երբ հրավիրված էի դամբարանների հայտնաբերման կապակցությամբ մի ինչ-որ շինարարության դադարեցման հարցով, պատահաբար իմացա, որ դադարեցվածը վան-վասպուրականցիների հուշակոթողն է: Իհարկե, վշտացա, որ ինչպես նոր նախագծի, այնպես էլ տեղի ընտրությանը ինձ անտեղյակ են պահել, երևի այն պատճառով, որ գիտեին, որ ես առաջին նախագծի ու տեղի համոզվեն կողմնակիցն էի: Վրդովմունքս փարատելու համար Վարդգես Համազասպյանը բացատրեց, որ Աշտարակ քաղաքում, Ագարակ, Ոսկեհատ և այլ գյուղերում բնակություն էին հաստատել զգալի թվով Վասպուրականի գյուղերից գաղթածներ: Մխիթարվեցի նրանով, որ մեր հայրենաշունչ վրիժառու Տաճատ Թերլեմեզյանի ջանքերն իրականացվում էին: 1981թ. մայիսին կազմակերպվեց հուշակոթողի հանդիսավոր բացումը, որին մասնակցում էր մեծ բազմություն, այդ թվում Սիյունքի ներկայացուցիչներ՝ Տաճատ Թերլեմեզյանը, Կարպիս Ջրբաշյանը և ուրիշներ, Հայաստանի շատ մտավորականներ, գլխավորությամբ աշխարհահռչակ աստղագետ, ԳԱ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի: Բացման խոսքն արտասանեց հարյուրամյա վանեցի ուսուցիչ Արսեն Հացագործյանը: Ելույթով հանդես եկավ նաև Տաճատ Թերլեմեզյանը: Երդվյալ դաշնակցականը ջերմ խոսքերով դրվատեց վերածնված հայրենիքը, հայրենի կառավարությունը, խորին շնորհակալություն հայտնեց հուշակոթողի կառուցմանն աջակցելու համար (առաջին հանրապետության տարիներին եղել է Ծաղկաձորի շրջանի նահանգապետը): Աշտարակի այգիներից դուրս, դեպի Գյումրի տանող խճուղու

ծախ կողմում, մի բարձունքի վրա վեր է խոյանում Վասպուրականի միաթև արծիվը: Ամեն տարի մայիսին նրա շուրջը տեղի է ունենում դաշտահանդես, որի արարման ծրագիրը (ծաղիկներով պատում, Վանա լճի ջրով ու Վանից բերած հողով օծում, ելույթներ, երգեր, պարեր և այլն) մեծ չափով նպաստում են հայրենակիցների մերձեցմանը, մասնակիցների հայրենասիրական զգացումների բորբոքմանը, ազատամարտի հերոսների ոգեկոչմանը ու դրանցով իրենց ժառանգների դաստիարակմանը: Տաճատ Թերլեմեզյանը վախճանվեց հուշակոթողի բացման հաջորդ տարին, 1982-ին: Հուշակոթողից ոչ հեռու գտնվող Ագարակ գյուղի հասարակությունը իրականացնում է ինամբ հուշակոթողի շրջապատի նկատմամբ, տարբեր միջոցներով նպաստում դաշտահանդեսների կազմակերպմանը: Նույնը, ավելի մեծ չափերով, կատարում է Արագածոտնի մարզպետարանը: Տաճատ Թերլեմեզյանի կտակի համաձայն, դուստրը՝ Անահիտը, նրա աճյունասափորը 1997-ին Հայաստան բերեց ու մեծ հանդիսավորությամբ ամփոփվեց հուշակոթողի պատվանդանում: Նույն տարին Ագարակ գյուղի հասարակությունը որոշում ընդունեց գյուղի դպրոցը կոչել Տաճատ Թերլեմեզյանի անունով: Երբ այդ որոշումը մարզպետարանի հավանությանն էր արժանացել,

հաջորդ տարին տիկին Անահիտը Հայաստան ժամանեց: Նա դպրոցին կատարած
նվիրատվությունների հետ միասին հայտարարեց, որ Տաճատ Թերլեմեզյանի
ժառանգներն այսուհետ հանձն են առնում դպրոցի շեֆությունը, պիտի
շարունակեն նյութական աջակցությամբ նպաստել դպրոցի գործունեությանը:
Դպրոցի սրահում դրվեց Տաճատ Թերլեմեզյանի կիսանդրին:
Հիշատակը նրա օրհնությամբ է հիշվում:

«Տաճատ Թերլեմեզյանը ժամանակակիցների հուշերում» գրքից
Մասն II